Հավելված
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
սեպտեմբերի 30-ի N625–Ն հրամանի

Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2017 թվականի հունիսի 27-ի N191– Ն հրամանի
Ձև

| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | Փաստաթղթի հերթական համարը ______________ (լրացվում է հարկային մարմնի կողմից) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 2 | 0 | 2 | 8 | 4 | 6 | 8 | 5 |
| 2. Հարկ վճարողը | ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԳՍՅԱՆ | | | | | | | |
| 3. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՋԱՓՆՅԱԿ ԱՋԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ Փ. 27 29 | | | | | | | |

Սույն հայտարարությունը ներկայացնում եմ 2026-05-05-ից
շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Սույնով հայտարարում եմ, որ՝
1) նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել ԱԱՀ-ի շեմը.
2) չեմ հանդիսանում բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ապահովագրական գործակալ, ապահովագրական բրոկեր, ներդրումային ընկերություն, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակից, գրավատուն, արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն իրականացնող, ներդրումային ֆոնդ, ֆոնդերի կառավարիչ, վճարահաշվարկային կազմակերպություն, խաղատների, շահումով խաղերի, տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեություն իրականացնող, վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող, նոտար, աուդիտորական կազմակերպություն, փաստաբանական ծառայություն մատուցող.
2.1) չեմ հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում կիրառվող տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի «M (ԷՄ) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող «69 Իրավաբանական և հաշվապահական գործունեություն», «70 Գլխամասային գրասենյակների գործունեություն. կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ» և «N (ԷՆ) Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող «78.2 Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3 Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» գործունեություններ իրականացնող.
2.2) չեմ հանդիսանում «Կրիպտոակտիվների մասին» օրենքով սահմանված կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձ.
3) (ենթակետն ուժը կորցրել է 28.12.2022 N 1395 -Ն)
4) չեմ հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի, ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ.
5) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն չեմ համարվում այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին փոխկապակցված անձ կամ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ինձ փոխկապակցված կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք հարկային մարմնին ներկայացրել են գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և հայտարարությունը ներկայացնելու օրվանից հետո, իսկ հայտարարությունում գործունեությունը դադարեցնելու այլ օր նշելու դեպքում՝ այդ օրվանից հետո փաստացի գործունեություն չեն իրականացրել.
6) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ, ինձ փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների նախորդ հարկային տարվա կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը չի գերազանցել (գերազանցում) ԱԱՀ-ի շեմը:

Տեղյակ եմ սույն հայտարարության մեջ տրվող ոչ ճիշտ տեղեկությունների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությանը:

Պաշտոնատար անձ ______________________
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Digitally signed by PETROSYAN LUSINE 5809850863
Date: 2026.05.24 23:55:17 AMT

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 24.05.2026 23:54

74w42405260045581415